

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Հայաստանի Հանրապետության պետական
կառավարման ակադեմիայի դոկտորանտ

ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ՝ ՆՐԱՆՅ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածում քննության է առնվում Հայաստանի Հանրապետությունում միգրանտների իրավական կարգավիճակի հետ կապված իրավադրույթները: Մասնավորապես, հոդվածում հեղինակն անդրադառնում է Հայաստանի Հանրապետությունում միգրանտների իրավական կարգավիճակի ընդհանարական իրավահարցերին՝ անդրադառնալով միգրանտների քաղաքացիական, քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության իրավակարգավորումներին: Հոդվածում հեղինակի կողմից համապատասխան գիտապրակտիկ վերլուծություններ են ներկայացվում Հայաստանում միգրանտների ընդհանուր իրավական կարգավիճակի սահմանադրաիրավական սկզբունք-արժեքների համատեքստում:

Հիմնաբառեր- անձի իրավական կարգավիճակ, միգրանտի իրավական կարգավիճակ, մարդու անօտարելի արժանապատվություն, սահմանադրական կարգի հիմունքների գլխավոր գաղափարաարժեքանական հենք, օրինական հիմքով ձեռք բերած սեփականություն, իրավական որոշակիություն:

Միգրանտի իրավական կարգավիճակին վերաբերող հարցադրումները իրավագիտության մեջ համընդհանուր ու հայեցակարգային նշանակություն ունեն ոչ միայն «անձի իրավական կարգավիճակ» եզրույթի իրավաբանական շրջանակում: Այն օժտված է հատուկ իրավական կարգավիճակով և, միաժամանակ, հանդիսանում է բարդ ու հավաքական իրավական կատեգորիա, որն արտացոլում է միգրանտ հանդիսացող անձի կապը հասարակության, պետության և նրան շրջապատող մարդկանց հետ՝ որոշելով միգրանտի իրավունքներն ու պարտականությունները և դրանց իրացման առանձնահատկությունները:

Մասնագիտական գրականության մեջ միգրանտների իրավական կարգավիճակը մի դեպքում դիտարկվում է որպես «ընդհանուր կարգավիճակ», որը վերաբերում է բոլոր միգրանտներին, իսկ մեկ այլ դեպքում՝ որպես «հատուկ կարգավիճակ», պայմանավորված է միգրանտների առանձին խմբերին պատկանելու հանգամանքով, օրինակ՝ փախստական, օտարերկրիացի ուսանող, գործարար և այլն²:

Առհասարակ խոսելով անձի, քաղաքացու կամ միգրանտի իրավական կարգավիճակի մասին՝ առաջին հերթին պետք է անդրադառնանք տվյալ երկրի սահմանադրությանը, քանի որ վերջինս

հանդիսանում է պետության իրավական համակարգի հենքը:

Այսպիսով, հետազոտության առարկա դարձնելով Հայաստանում միգրանտների իրավական կարգավիճակի հարցը՝ պետք է առաջին հերթին անդրադարձ կատարել Հայաստանի Հանրապետության Մահմանադրության (այսուհետ՝ Մահմանադրություն) 3-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը, որտեղ ամրագրված է. «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է»:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը իր՝ 2006 թվականի հոկտեմբերի 04-ի ՆԱԴ-Ո-649 որոշման մեջ անդրադարձել է մարդուն որպես «բարձրագույն արժեք» դիտարկելու հանգամանքին և փաստել, որ «բարձրագույն արժեք» նշանակում է, որ որևէ այլ արժեք, այդ թվում և՛ պետական, և՛ հանրային խնդիրների լուծմանը կոչված որևէ համակարգ, չի կարող ավելի բարձր դասվել: Սրանից էլ բխում է Մահմանադրության նույն հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմը. «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազա-

www.journal.lawinstitute.am

տություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»»։ Անձի արժանապատվությունը սահմանադրական իրավունքի տեսանկյունից պետական վերաբերմունքի այն չափանիշն է, որն ուղղված է անձին՝ իր իրավական կարգավիճակով, որպես բարձրագույն սոցիալական արժեք ընկալելու փաստով³։

Վերոնշյալ սկզբունք-արժեքը հանդիսանում է Հայաստանի սահմանադրական կարգի հիմունքների գլխավոր գաղափարաարժեքանական հենքը։ Հատկապես ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2015 թվականին կատարված սահմանադրական փոփոխությունների արդյունքում Սահմանադրության 3-րդ հոդվածն արմատական փոփոխություններ կրեց և Սահմանադրության 203-րդ հոդվածի ուժով դարձավ փոփոխման ոչ ենթակա հոդված։

Մասնավորապես, վերոնշյալ սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում մարդն է հռչակվում բարձրագույն արժեք, իսկ մինչ այդ փոփոխությունները Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված էր. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»։ Այսինքն, ներկայումս, գաղափարաարժեքանական առումով, Սահմանադրությունը, մարդուն հռչակելով որպես բարձրագույն արժեք, վերջինիցս անջատ չի դիտարկում նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները։ Այդ է վկայում Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված այն սկզբունք-արժեքը, որի համաձայն՝ մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է։

Եվ իսկապես, մարդու արժանապատվության «անօտարելիություն» կամ «անխախտելիություն» եզրույթները հոռետեսական բնույթ չեն կրում, քանի որ անձի արժանապատվության «անօտարելիությունը» կամ «անխախտելիությունը» առաջին հերթին դրսևորվում է նրանում, որ անձը հասարակությունում չի կարող ապրել առանց բարոյական գնահատականի, և դրա կապը անձի հետ այնքան անխախտելի է, որքան որ անձի սովորի կապը անձի հետ⁴։

Միաժամանակ, անհրաժեշտ է կարևորել այն, որ ՀՀ Սահմանադրությունը մարդու անօտարելի արժանապատվությունը դիտարկում է որպես վերջինիս իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք։ Իհարկե, վերոնշյալ սկզբունք-արժեքը մեկնաբանման կարիք ունի, ինչը կփորձենք անել

մենք մեր գիտապրակտիկ տեսանկյունից։

Ելնելով Սահմանադրության այլ նորմերի հետ օրգանական կապի տեսանկյունից՝ մարդու անօտարելի արժանապատվությունն անհրաժեշտ է դիտարկել որպես վերջինիս իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք, ինչը, կարծում ենք, իր մեջ բովանդակում է մեկը մյուսին փոխարացնող և հայեցակարգային նշանակություն ունեցող մի շարք տարրեր։ Մասնավորապես, խոսքը վերաբերում է հետևյալին.

1) «մարդու անօտարելի արժանապատվություն» եզրույթը ոչ միայն սոցիալական-բարոյական կատեգորիա է, այլ նաև իրավական, որը ցույց է տալիս մարդու՝ որպես հասարակության անդամի, տեղն ու դերը, ինչպես նաև այն սոցիալ-իրավական գնահատականը, որը տրվում է մարդուն տվյալ հասարակության անդամների (սուբյեկտների) և հանրային իշխանության ինստիտուտների հետ փոխառնչվելիս,

2) հանրային իշխանությունների կողմից մարդու իրավունքների ու ազատությունների ճանաչումը, պահպանումը, պաշտպանությունը և դադարեցումը պետք է ենթարկվի իրավական կարգավորման՝ կամայականությունները բացառելու համար՝ հենվելով Սահմանադրությունում ամրագրված սկզբունք-արժեքների վրա, ինչը նաև բխում է Սահմանադրության այն դրույթից, որ Հայաստանի Հանրապետությունը իրավական պետություն է,

3) միաժամանակ, հանրային իշխանությունները, երբ պարտավոր են իրավաչափ նպատակներին հասնելու համար սահմանափակել (կամ դադարեցնել) մարդու իրավունքներն ու ազատությունները, ապա դա պետք է իրականացնեն իրավական եղանակով՝ նվազագույն վնասի սկզբունքին համահունչ, այսինքն, այդ սահմանափակումները պետք է լինեն այնքան, որքան որ պետք է նվազագույնն այդ իրավաչափ նպատակին հասնելու համար,

4) մարդու կողմից իր իսկ իրավունքների ու ազատությունների իրացման եղանակների (իրավակառուցակարգային) մատչելիության ապահովումը հանրային իշխանությունների պարտականությունն է, որը նաև ամրագրված է Սահմանադրության 75-րդ հոդվածում։

Վերոնշյալ գիտապրակտիկ վերլուծությունները բացահայտում են մարդու արժանապատվության սահմանադրաիրավական արժեքի ամբողջական էությունը։

Այսպիսով, կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետությունում միգրանտների իրավական կարգավիճակի հենքը Սահմանադրության 3-րդ հոդվածում ամրագրված սկզբունք-արժեք-

ներն են: Առհասարակ, Սահմանադրության 2-րդ գլուխը՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, հումանիստական մոտեցմամբ է շարադրված, քանի որ դրանում առավելապես օգտագործվում են «յուրաքանչյուր ոք», «յուրաքանչյուր անձ» կամ «մարդ» եզրույթները, ինչը վկայում է այն մասին, որ միգրանտները՝ իրենց իրավական կարգավիճակով, գրեթե չեն տարբերվում Հայաստանի քաղաքացիներից, բացառությամբ որոշ դեպքերի:

Օրինակ՝ կյանքի, անձի անձեռնմխելիության, անձնական կյանքի գաղտնիության և այլ իրավունքներն ու ազատությունները անվեհապահորեն տրված են ինչպես Հայաստանի քաղաքացիներին, այնպես էլ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց: Դա է վկայում նաև «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմը. «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիներն ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հավասար իրավունքներ, ազատություններ և պարտականություններ, եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ»:

Սահմանադրության 40-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է. «Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք», այսինքն, որպեսզի միգրանտը Հայաստանում ամբողջ ծավալով օգտվի իր կարգավիճակից բխող իրավունքներից ու պարտականություններից, ապա պետք է Հայաստանի Հանրապետություն մուտք գործի օրինական ճանապարհով, հակառակ պարագայում կհայտնվի ապօրինի միգրանտի կարգավիճակում, որի իրավունքների ու պարտականությունների ծավալն այլ է:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է. «Օտարերկրացիները մուտք են գործում Հայաստանի Հանրապետություն պետական սահմանի անցման կետերով՝ վավերական անձնագրի առկայության, մուտքի վիզայի կամ կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթի հիման վրա և սահմանային հսկողություն իրականացնող, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի թույլտվության դեպքում, եթե այլ կարգ նախատեսված չէ սույն օրենքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով»: Վերոնշյալ իրավա-

կան դրույթից հստակորեն երևում է, որ առանց կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի թույլտվության օտարերկրացիները չեն կարող մուտք գործել Հայաստանի Հանրապետություն:

Անհրաժեշտ է նկատել, որ նման սահմանափակումն ինքնին հակասության մեջ է մտնում Սահմանադրության 3-րդ, 5-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածների հետ, քանի որ «կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի թույլտվության» իրավական դրույթը տարածական մեկնաբանության առիթ է տալիս և հստակ չի երևում պետական մարմնի հայեցողական լիազորությունների իրավական շրջանակը, ինչի արդյունքում անձը տվյալ պարագայում գրկվում է պետական մարմնի իրավաչափ վարքագիծը կանխատեսելու սահմանադրաիրավական իրավունքից, որը անուղղակի ձևով ամրագրված է Սահմանադրության 3-րդ հոդվածում:

Այսինքն, վերոնշյալ պարագայում անձի սահմանադրաիրավական առումով արժանապատվության մասին խոստելն ավելորդ է, հենց առաջինը՝ մեր կողմից սույն գիտական աշխատանքում նշված գիտապրակտիկ այն չորս վերլուծական մեկնաբանությունների արդյունքում: Ի դեպ, վերոգրյալն իրավական որոշակիության խնդիր է, ինչին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2006 թվականի ապրիլի 18-ի թիվ ՄԴՈ-630 որոշմամբ անդրադարձել է և արձանագրել. «...Տվյալ օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը...»:

Հայաստանի Հանրապետությունում միգրանտների քաղաքացիական և քաղաքական իրավունքների ծավալը գրեթե չի տարբերվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերոնշյալ իրավունքների ծավալից, քանի որ, ինչպես նշել ենք, Սահմանադրությունում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները հումանիստական մոտեցմամբ են շարադրված, քանի որ դրանում առավելապես օգտագործվում է «յուրաքանչյուր ոք», «յուրաքանչյուր անձ» կամ «մարդ» եզրույթները, ինչը վկայում է այն մասին, որ միգրանտները իրենց իրավական կարգավիճա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կով գրեթե չեն տարբերվում Հայաստանի քաղաքացիներից, բացառությամբ որոշ դեպքերի: Օրինակ՝ Հայաստանում միգրանտներն ու քաղաքացիները նույն հավասար ծավալով ու պայմաններով օգտվում են կյանքի, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, անձնական ազատության, մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության ու այլ իրավունքներից:

Մի փոքր այլ է միգրանտների քաղաքական իրավունքների հետ կապված խնդիրը: Սահմանադրության 48-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է. «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը», իսկ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի⁵ 2-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում ամրագրված է. «2. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած, ընտրությունն անցկացնող համայնքի բնակչության ռեգիստրում ...

3) մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիություն չունեցող ընտրող)», իսկ 80-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է. «1. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք»: Իսկ 126-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է. «1. Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու անդամ կարող են ընտրվել սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք»:

Այսինքն, Հայաստանի Հանրապետությունում միգրանտներն ունեն են տեղական ինքնակառա-

վարման մարմինների ընտրություններին մասնակցելու իրավունք: Իսկ միգրանտներին համապետական ընտրություններին (պառլամենտական ընտրություններ) մասնակցելու իրավունք վերապահված չէ՝ ազգային անվտանգության շահերից ելնելով, քանի որ հակառակ պարագայում վտանգը մեծ է, որ Հայաստանի իրավական-քաղաքական դաշտը լուրջ ցնցումների կենթարկվի, և որ կստեղծվի իրավիճակ, որում Հայաստանի քաղաքացիները վճռորոշ ձայն չեն ունենա իրենց պետության իրավական-քաղաքական կյանքը կազմակերպելիս:

Եվ որպես վերոգրյալի տրամաբանական շարունակություն, Սահմանադրության 46-րդ հոդվածի համաձայն՝ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու բացառիկ իրավունքը վերապահում է միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին:

Բայց, այդ չէ՛ Սահմանադրության 41-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ և 45-րդ հոդվածներով ամրագրված նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ Հայաստանում միգրանտների սոցիալական և տնտեսական իրավունքների ճանաչումն ու պաշտպանությունը իր իրավական ծավալով գրեթե նույնպես չի տարբերվում Հայաստանի քաղաքացիների համանուն իրավունքների ընդհանուր ծավալից:

Հայտնի է, որ սոցիալ-տնտեսական իրավունքները կոչված են ապահովելու մարդու իրավական կարգավիճակը՝ կապված աշխատանքի, կենցաղի, սոցիալական բարեկեցության ու ապահովության ոլորտների հետ, նպատակ ունենալով ստեղծել այնպիսի պայմաններ, որոնց պարագայում մարդիկ կարող են ազատ լինել վախից (սոցիալ-կենցաղային) և կարիքից⁶. այդ առումով շատ կարևոր է աշխատանքի ազատ ընտրության իրավունքը: Այդ իրավունքից հավասարապես օգտվում են ինչպես Հայաստանի քաղաքացիները, այնպես էլ միգրանտները՝ համաձայն Սահմանադրության:

Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է. «Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք», իսկ «Օտարերկրացիների մասին» չէ՛ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում ամրագրված է. «2. Հայաստանի Հանրապետության գործատուներն իրավունք ունեն օտարերկրացի աշխատողի հետ աշխատանքային պայմանագիր (ծառայությունների մատուցման պայմանագիր) կնքելու և նրա աշխատանքն օգտագործելու՝ լիազորված մարմնի կողմից օտարերկրացի աշխատողի համար տրամադրված աշխատանքի թույլտվության հիման վրա: Լիազորված մարմինը օտարերկրացի աշխա-

տողին աշխատանքի թույլտվություն տրամադրելիս հաշվի է առնում Հայաստանի Հանրապետության աշխատանքի շուկայի կարիքները և զարգացումները:

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի շուկայի կարիքների գնահատման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ գործատուի համար սահմանվում է ժամկետ, որի ընթացքում նա պարտավոր է իր մոտ առկա թափուր աշխատատեղը համարել Հայաստանի Հանրապետության քաղաքացիներով: Սահմանված ժամկետում լիազորված մարմնի կողմից իր պահանջներին համապատասխանող թեկնածուի առաջադրման բացակայության, ինչպես նաև առաջադրված թեկնածուին գործատուի մերժելու դեպքերում գործատուն կարող է գտնել այդ պահանջներին համապատասխանող օտարերկրացու և դիմել լիազորված մարմնին՝ կոնկրետ օտարերկրացի աշխատողի համար կոնկրետ ժամկետով աշխատանքի թույլտվության տրամադրման համար՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը»:

Անհրաժեշտ է նկատել, որ վերոնշյալ օրենսդրական նորմերը հակասության մեջ են մտնում Սահմանադրությամբ ամրագրված աշխատանքի ազատ ընտրության իրավունքի հետ, քանի որ Սահմանադրության համաձայն՝ այդ իրավունքի նման սահմանափակում չկա, ինչն էլ իր հերթին խտրական վերաբերմունք է առաջացնում միգրանտների նկատմամբ: Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2010 թվականի մայիսի 04-ի N ՍԴՈ-881 որոշմամբ անդրադարձել է խտրականության արգելման սկզբունքին և արձանագրել է. «...Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերաժվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից ...»:

Այժմ վերոգրյալի հիման վրա վերլուծենք միգրանտների աշխատանքային թույլտվության իրավական թույլատրելիության հարցը: Մեր կարծիքով, երբ պետությունը միգրանտին կացության կարգավիճակ է տրամադրում, ապա, այդ կարգավիճակով

էլ պայմանավորված, միգրանտը Հայաստանում պետք է առանց խոչընդոտների իրացնի Սահմանադրությամբ ամրագրված և պաշտպանվող աշխատանքի ազատ ընտրության իր իրավունքը: Այսինքն, երբ Հայաստանի Հանրապետությունը որևիցե միգրանտի կացության կարգավիճակ տալիս պետք է հաշվի առնի իր աշխատաշուկայի ու քաղաքացիների սոցիալ-տնտեսական շահերը, հակառակ պարագայում այն խտրականության դրսևորում կհամարվի: Եվ բացի այդ, երբ պետությունը, իրավաչափ նպատակ հետապնդելով սահմանափակում կամ զրկում է անձին այս կամ այն իրավունքից կամ ազատությունից, ապա պետության պարտավորությունն է անձի համար դրա անբարենպաստ հետևանքների մասին հոգ տանելը. դա անուղղակի կերպով ամրագրված է Սահմանադրության 3-րդ հոդվածում: Օրինակ, երբ պետությունը մարդուն օրենքով սահմանված կարգով ազատությունից զրկում է, ապա իր վրա է վերցնում այդ անձի սննդի, հագուստի, կացարանային պայմանների, առողջության պահպանման և այլ հարակից իրավունքների պաշտպանությունն ու պահպանումը, քանի որ այդ անձը, թեև իր մեղքով, զրկված է ազատությունից, և նա ազատորեն չի կարող իրացնել իր այն իրավունքները, որոնք թույլ կտային վերջինիս իրացնելու վերոնշյալ իրավունքները: Ուստի, եթե Հայաստանի Հանրապետությունը, իր աշխատաշուկայի պայմաններից դրդված, միգրանտներին աշխատանքային թույլտվություններ չի տրամադրում, ապա պարտավոր է հոգալ այդ միգրանտների սննդի, հագուստի, կացարանային պայմանների, առողջության պահպանման և այլ ծախսերը, հակառակ պարագայում աշխատանքային թույլտվություն չտրամադրելը կհանգեցնի խտրական վերաբերմունքի:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածը հռչակել է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, այն է՝ սոցիալ-տնտեսական քաղաքականության մոդել, որը կոչված է մրցունակ տնտեսության հենքի հիման վրա միացնել ազատ նախաձեռնողականությունը սոցիալական առաջընթացի հետ, ինչն էլ ապահովվում է տնտեսական ցուցանիշներով: Այս տնտեսական մոդելը ելնում է այն պահանջումից, որ ոչ՝ պետությունը, ոչ՝ մասնավոր տնտեսավարող սուբյեկտները իրավունք չունեն լիարժեք վերահսկելու տնտեսությունը, քանի որ նրանք կոչված են ծառայելու մարդկանց (պետության բնակչությանը), և այս տնտեսական մոդելի հիմնական բնութագրիչներից մեկն էլ այն է, որ այն կոչված է ապահովելու պե-

տության բնակչության լիարժեք և իրական զբաղվածությունը (ներառյալ անձի՝ ազատ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու պահանջ-նունքը):

Այսպիսով, Հայաստանի տնտեսական նոր կարգի ձևավորման համար էական նշանակություն ունի մրցունակ մարդկային կապիտալը, այն է՝ գիտելիքների, հմտությունների և կարողությունների համակցություն, որն օգտագործվում է մարդու և ամբողջ հասարակության բազմազան պահանջ-նունքների բավարարման համար: Մարդկային կապիտալը լայն իմաստով տնտեսության, հասարակության և ընտանիքի զարգացման արտադրողականության ինտենսիվ գործոնն է, որն իր մեջ ներառում է աշխատանքային ռեսուրսների կրթված մասը, գիտելիքները, մտավոր և կառավարչական աշխատանքի գործիքակազմը, բնակչության միջավայրը և այն աշխատանքային գործունեությունը, որը ապահովում է մարդկային կապիտալի՝ որպես զարգացման արտադրական գործոնի, արդյունավետ և ռացիոնալ գործունեությունը: Այսպիսով, պետք է փաստենք, որ Հայաստանի տնտեսական նոր կարգը միգրացիոն քաղաքականության մշակման ու իրագործման բազիսն է հանդիսանում, որի արդյունքում ներգաղթի իրավական կարգավորումը պետք է բխի Հայաստանի տնտեսական նոր կարգով պայմանավորված մարդկային կապիտալի ձևավորման և պահպանման շահերից, այն է՝ պետության աշխատուժի ինքնաբավություն, աշխատուժի կրթական մակարդակի բավարարում, ներգաղթյալ աշխատողների մշակութային և կրթական հարմարեցում տեղական շուկայի պահանջներին և այլն: Այսինքն, վերոնշյալ գիտապրակտիկ վերլուծությունը նույնպես փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունը միգրանտին կացության կարգավիճակ տրամադրելիս պետք է արդեն վերլուծած լինի աշխատաշուկայի սոցիալական-տնտեսական պատկերը:

Հայաստանի տնտեսական նոր կարգով պայմանավորված՝ Սահմանադրության 10-րդ հոդվածում ամրագրված է. «1. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը: 2. Ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են», այսինքն, Հայաստանի Հանրապետությունում հավասարապես պաշտպանվում են մասնավոր, հանրային և խառը սեփականության ձևերն առանց որևէ սեփականության ձևի առավելություն վերապահելու: Վերոգրյալը կարևոր սկզբունք է ինչպես Հայաստանի քաղաքացիների, այնպես էլ միգրանտների սոցիալ-տնտե-

սական իրավունքների պահպանման և պաշտպանության համար:

Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է. «Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով»: Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը իր՝ 2008 թվականի նոյեմբերի 25-ի N ՍԳ-Ո 780 որոշմամբ անդրադարձել է «տնտեսական» և «ձեռնարկատիրական» գործունեություն եզրույթներին, այն է. «Տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց: Իսկ տնտեսական գործունեության պարտադիր տարր է համարվում այն, որ այդ գործունեությունը՝ հանդիսանում է տնտեսական գործունեություն, հետապնդում է շահույթ (եկամուտ) ստանալու նպատակ, իրականացվում է ինքնուրույն և իր ռիսկով, իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց, ենթակա է պետական գրանցման (առանձին դեպքերում՝ նաև լիցենզավորման), չի ներառում քաղաքացիների անձնական գույքի (ներառյալ նաև անշարժ) և իրերի օտարումը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իրականացվում է պարբերաբար»:

Վերոգրյալը կարևոր է Հայաստանի տնտեսական աճի խթանման համար, քանի որ միգրանտներին իր քաղաքացիների հետ իրավահավասար կարգավիճակով հնարավորություն է ընձեռում իրականացնելու տնտեսական և ձեռնարկատիրական գործունեություն՝ պահպանելով ու պաշտպանելով միգրանտների իրավունքներն ու օրինական շահերը: Դա է փաստում նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, աշխատանքային օրենսգիրքը և հարակից այլ իրավական ակտեր հավասար իրավապայմաններ են ապահովում միգրանտների և Հայաստանի քաղաքացիների համար:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: Ուշադրության են արժանի «օրինական հիմքով ձեռք բերած սեփականություն» եզրույթի սահմանադրաիրավական ընկալման հիմնախնդիրները, որոնք պետք է մեկնաբանվեն հենց Սահմանադրության 3-րդ, 10-րդ, 11-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածների օրգանական միասնության համատեքստում: Այդ առումով, կարծում ենք,

որ «օրինական հիմքով ձեռք բերած սեփականություն» սահմանադրաիրավական եզրույթի հայեցակարգային բովանդակությունը պետք է խարսխված լինի հետևյալ հիմնադրույթների վրա:

Դրանք են՝ ա) սեփականության ձեռքբերման հիմքերը, կարգը ու օբյեկտները պետք է սահմանվեն օրենքով, բ) այդ օրենքի իրավական սահմանները նշելիս պետք է ելակետ ընդունել մարդու արժանապատվությունը, այսինքն, այդ օրենքով ամրագրվող սահմանափակումները պետք է լինեն օբյեկտիվ և համաչափ՝ հանրային իշխանության կողմից իրավաչափ նպատակին հասնելու համար, գ) օրենքի սոցիալ-տնտեսական սահմանները պետք է դուրս չգան Հայաստանի որդեգրած տնտեսական կարգի շրջանակներից, դ) օրենքը պետք է հավասարապես ապահովի ու պաշտպանի քաղաքացիական իրավունքի սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը, ե) օրենքով պետք է ամրագրվի, որ սեփականության իրավունքը մարդու սոցիալ-տնտեսական իրավունքների երաշխավորման հենքն է, և այն չի կարող օգտագործվել ի վնաս քաղաքացիաիրավական սուբյեկտների:

Վերոնշյալ վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետությունում միգրանտներն ունեն գրեթե Հայաստանի քաղաքացիներին հավասարեցված սոցիալ-տնտեսական իրավունքներ ու պարտականություններ:

Այժմ անդրադառնանք միգրանտների մշակութային իրավունքների հիմնախնդրին: ՀՀ Սահմանադրության 56-րդ հոդվածով ամրագրված է ազգային ու էթնիկական ինքնության պաշտպանության իրավունքը, որը միգրանտների համար նաև կենսական նշանակություն ունեցող իրավունք է, և վերջինս նույնիսկ չի կարող սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ (Սահմանադրության 76-րդ հոդված): Վերոգրյալը մարդու իրավունքների և ազատությունների տեսանկյունից դրական տեղաշարժ է, թեև արդարության համար պետք է նշենք, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում միջազգային պայմանագրերի և օրենսդրական մակարդակով պաշտպանվում է անձանց ազգային ու էթնիկական ինքնության պաշտպանության իրավունքները: Վերոգրյալը 2015 թվականին իրականացված սահմանադրաիրավական փոփոխությունների արդյունք է, որի իրացման կարգը, պայմանները և այլ կարևոր դրույթներ պետք է դեռ ամրագրվեն օրենքով: Օրինակ՝ դեռ հստակորեն չեն կարգավորվում միգրանտ-աշխատողների և նրանց ընտանիքի անդամների կրթական և մշակութային իրավունքներն ու պարտականությունները. օրինակ՝ միգրանտ-

աշխատողների երեխաների կրթությունը պետք է կազմակերպվի հայոց լեզվով, թե՛ նրանց մայրենի, կամ ներգաղթյալների համար հայերեն սովորելը իրավունք է, թե՛ պարտականություն և այլն:

Հայոց լեզվի ուսուցման հարցը կարևոր է Հայաստանի նման մոնոտարր պետության համար, քանի որ մի կողմից պետությունը լուծում է իր միասնական էթնիկ մշակութային պահպանման հարցերը, իսկ մյուս կողմից իրականացնում է միգրանտների ադապտացիան լեզվաքաղաքականության միջոցով, ինչն ուղղակի կապի մեջ է գտնվում միգրանտների իրավական կարգավիճակի հետ, որովհետև անհնար է պատկերացնել, որ առանց միգրանտների սոցիալ-մշակութային ադապտացիայի հնարավոր է ապահովել միգրանտների պատշաճ իրավական կարգավիճակ: Ի դեպ, Հայաստանի լեզվաքաղաքականությունն ազգային անվտանգության քաղաքականության մի մասն է կազմում: Իսկ լեզվաքաղաքականությունը պետություն ստեղծած ազգի մշակութային գերակա արժեքի՝ լեզվի լիակատար, անվտանգ կենսագործունեությունն ապահովող օրենսդրության, գործնական միջոցառումների համակարգն է⁹: Միգրանտների մշակութային իրավունքների իրացման ամբողջ քաղաքականությունը պետք է նաև ուղղված լինի նրանց Հայաստանի հասարակությանն ադապտացնելու համար¹⁰:

Միգրանտների սոցիալական-իրավական կարգավիճակի վրա ուղղակի ազդեցություն կարող է գործել նաև հյուրընկալ պետության՝ տվյալ ժամանակաշրջանի ազգային գաղափարախոսությունը (կամ գաղափարախոսությունները): Վերջինս գաղափարների այնպիսի համակարգ է, որը սերտ առնչություն ունի հասարակության հոգեբանության հետ: Այսինքն՝ տվյալ հասարակության գաղափարախոսությունը խարսխված է նրա աշխարհընկալման ու բարոյական չափանիշների վրա, այլապես գաղափարախոսությունը կտրվում է իր բովանդակությունից և չի ընդգրկում հասարակության գիտակցության շերտերը¹¹:

Հայաստանի Հանրապետությունը, մոնոտարր (ազգային) պետություն լինելով հանդերձ, բնականաբար պետք է իր ազգային գաղափարախոսությունները կառուցեր իր ազգային ինքնության նույնականացման շուրջ: Անշուշտ, Հայաստանի Հանրապետությունում ամենալայն ընկալում ստացած ազգային գաղափարախոսությունը «մեկ ազգ մեկ մշակույթ» գաղափարն է, որը նպատակ է հետապնդում սփյուռքում հայապահպանությանը զարկ տալու և սփյուռքահայերի՝ իրենց հայրենիքի հետ ամուր կապը պահելու համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ պետք է նշել, որ Հա-

www.journal.lawinstitute.am

յաստանի Հանրապետությունում միգրանտների իրավական վիճակի ամբողջ նկարագիրը պետք է վերլուծության ենթարկել Սահմանադրության 3-րդ և 13-րդ հոդվածների, ինչպես նաև սահմանադրաիրավական սկզբունք-գաղափարների ու նորմ-սկզբունքների լույսի ներքո, այն է՝ միգրանտների իրավական վիճակի ամբողջական բնութագիրը ելնում է այն փաստից, որ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է, և որ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով: Վերոգրյալի գիտապ-

րակտիկ վերլուծության արդյունքում կարող ենք հանգել այն եզրահանգման, որ միգրանտին Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ տալու հարցը կապված է Հայաստանի շահերի հետ, իսկ երբ այդ կարգավիճակը տրված է միգրանտին, ապա նրա իրավական կարգավիճակը գրեթե չի տարբերվում Հայաստանի քաղաքացիներից՝ Սահմանադրության 3-րդ հոդվածի տրամաբանության ներքո:

¹ Лупенко И. Ю. “Понятие и элементы специального правового статуса мигрантов”. <http://отрасли-права.рф/article/8219>

² Лупенко И. Ю. “Понятие и элементы специального правового статуса мигрантов”. <http://отрасли-права.рф/article/8219>

³ <http://www.jurterms.ru/161-135410/>

⁴ Телегина И. В. “Честь и достоинство личности как правовые категории”, Вестник ЮУрГУ. серия: право N 28 (100), с 76. <http://elibrary.ru/item.asp?id=12924347>

⁵ ՀՀ Ընտրական օրենսգիրք՝ ընդունված 25.05.2016թ., ՀՕ-54-Ն:

⁶ Гордон Л. А. “Социально-экономические права человека: содержание, особенности, значение для России”. С. 1, <http://ecsoeman.hse.ru/data/391/821/1217/002Gordon.pdf>

⁷ Мордовченков Н. В., Паленова Т. В., Поляков В. М. “Людвиг Эрхард и социальная рыночная экономика в Германии: Инфраструктурный аспект” (Азимут научных исследований: экономика и управление. 2015. No 3 (12), С. 67) /<http://elibrary.ru/item.asp?id=24600908/>

⁸ Корчагин Ю. А. Широкое понятие человеческого капитала.- Воронеж: ЦИРЭ /<http://www.lerc.ru/?part=articles&art=3&page=22/>.

⁹ «Ստվերային լեզվաքաղաքականություն» Հայերենի բարձրագույն խորհուրդ: <http://www.lragir.am/index/arm/0/society/view/36364>

¹⁰ Տեղաբնակների և միգրանտների անհանդուրժողականության հարցերը քննարկման առարկա են դարձել մասնագիտական գրականության մեջ: Այսպես, ամերիկացի պրոֆեսոր Կ.Գոդն առանձնացնում է ադապտացիայի պայմաններում միջէթնիկ համագործակցության հիմնական չորս մոդելներ. Flight - սեփական միկրոաշխարհի ստեղծում՝ այլ մշակույթի հետ ուղիղ շփումներից խուսափելու փորձեր, Fight – էթնոկենտրոնության ակտիվ դրսևորում՝ սեփական վարքագծի մոդելը նոր միջավայր փոխանցելու ցանկություն, Filter - մշակութային երկխոսություն կամ բազմաբևեռ ռազմավարություն՝ սեփական մշակույթի պահպանում, սեփական էթնիկ խմբի հետ նույնականացում, բարձր շփվողականության մակարդակ նոր միջավայրում և այլն, Flex – մշակութային նույնականացման փոփոխություն ինչպես արտաքին պահվածքում, այնպես էլ սոցիալական ընկալման մակարդակում: Կարծում ենք, որ այս միջէթնիկ համագործակցության չորս մոդելների առկայությունը պետք է հաշվի առնել Հայաստանի Հանրապետության կողմից միգրանտների ադապտացիայի քաղաքականության մշակման գործում: Տես մակ՝ Владимирова С. С., Пшенко К. А., Шарри Т. Г. «Проблемы социокультурной, языковой и правовой адаптации трудовых мигрантов в РФ», жур. “Человек и образование” N 4, ст. 50 /снос. 4/ <http://elibrary.ru/item.asp?id=15566707>:

¹¹ Տես նաև՝ <http://www.hayzinvor.am/12297.html>

Ափոտ Այրապետյան

Кандидат юридических наук, доцент
Докторант академии государственного управления РА

РЕЗЮМЕ

Правовой статус мигрантов: защита их гражданских, политических, социальных, экономических и культурных прав в Республике Армения

В статье рассматриваются правовые положения, касающиеся правового статуса мигрантов в Республике Армения. В частности, автор статьи обращается к общим правовым вопросам правового статуса мигрантов в Республике Армения, касающиеся правовых норм мигрантов, как гражданские, политические, социальные, экономические и культурные права. Автором в статье представлен научно-практический анализ общего правового статуса мигрантов в контексте конституционно-правового принцип-ценностей.

Ключевые слова: юридический статус, юридический статус мигранта, неотчуждаемое достоинство человека, главная идейно-ценностная основа конституционного строя, приобретенная на законных основаниях собственность, правовая определенность.

Ashot Hayrapetyan

PhD in law, Associate professor
Doctoral in the Public Administration
Academy of the Republic of Armenia

SUMMARY

The legal status of migrants: their civil, political, social, economic and cultural rights in the Republic of Armenia

The article examines the legal provisions related to the legal status of migrants in the Republic of Armenia. In particular, the author addresses the general legal issues regarding the legal status of migrants in the Republic of Armenia, referring to the protection of migrants' civil, political, social, economic and cultural rights. In the article the author presented practical analysis about the legal status of migrants in the context of the constitutional principle of common values.

Keywords: legal status of the individual, legal status of the migrant, inalienable human dignity, general ideological- axiological pillar of the constitutional basis, property acquired by legal means, legal certainty.